ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » _____ 2018 թ. № _____ -Ն

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հաստատել մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն №1 հավելվածի:
2. Հաստատել մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն № 2 հավելվածի:
3. Պետական կառավարման մարմիններին՝ մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունը համապատասխանեցնել սույն որոշման շրջանակներում հաստատված մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը (№1 հավելված):

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարներին՝ մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունը համապատասխանեցնել սույն որոշման շրջանակներում հաստատված մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը (№ 2 հավելված):